№ 54 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 12 1903 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 12 № 54

ԵՐԵՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Բայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Բայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պարտաւորութիւն. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բագուի հայոց Մարդասիրական ընկերութեան աշխատանքի տունը. Նամակ Գանձակից. Նամակ Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Պատկերներ Րաֆֆիի կեանքից.

ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Ասել թէ մեզանում մարդիկ չեն համակրում հասարակական գործիչին—սխալ կը լիներ, բայց որ հասարակական գործերը ընդհանրապէս շատ վատ են գնում—այդ էլ իրողութիւն է։

Համակրելը, ընդհանրապէս բարի ցանկութիւններ ունենալը դեռ բաւական չէ, որ հասարակական գործերը աջող ընթացք ստանան. անհրաժեշտ է, որ մարդիկ նուիրվեն այդ գործերին, նրանցով լուրջ զբաղվեն և համարեն նրանց այնպիսի պարտաւորութիւններ, ինչպէս որ պարտաւորութիւններ են դարձել նրանց ընտանեկան հոգսերը, պաշտօնավարութեան պահանջները, նիւթական ապահովութեան խնամատարութիւնը։

Ներկայումս հասարակական գործունէութիւնը մեզանում ոչ այլ ինչ է, եթէ ոչ միայն ազատ ժամերի մի զուարճութիւն, մի աւելորդ, անպարտաւորական մի միջնադէպ, որով կարելի է և զբաղվել և չը զբաղվել, որը կարելի է և մոռանալ և զանցաւութեան տալ և յետոյ բոլորովին ջնջել ու դուրս գցել հետաքրքրութեան առարկաների ցուցակից։

Այդպէս վերաբերվելով հասարակական գործին՝ մենք ոչ մի արդիւնաւէտ հետեւանքի չենք կարող հասնել։ Մենք կը մնանք լոկ համակրութիւններ յայտնելու սկզբնական շրջանում և մի քայլ առաջ չենք գնայ։ Մեր երկիրը հանդէս է բերում ամեն օր բազմաթիւ երեւոյթներ, որոնք կարօտ են լուրջ վերաբերմունքի և քննութեան, մեր առաջ բուսնում են բազմաթիւ կարիքներ, որոնց վերաբերութեամբ մենք պարտաւոր ենք ներգործական դիրք բռնել։ Իսկ իրականութեան մէջ ի՞նչ ենք տեսնում։ Հէնց որ փոքր ի շատէ լուրջ գործ է ասպարէզ դուրս գալիս, հէնց որ պահանջվում է ուղեղի մեծ գործունէութիւն և առհասարակ աշխատանք, ամենքը մի կողմ են քաշվում և փախչում գործից։

Մինչև որ մենք չենք սովորի հասարակական գործը ճանաչել նոյնքան կարեւոր և պարտաւորեցուցիչ մի գործ, որքան մեր մասնաւոր կեանքի էական և կենսական գլխաւոր գործերն են և կը խօսենք նրանց մասին միայն մեր պարապութեան ժամերում, մինչև այդ մենք ստիպված կը լինենք բաւականանալ միայն մակերեւոյթական համակրութիւններով, կենացների ճառերով և առերեւոյթ գործունէութեամբ։

Հասարակական գործը պարտաւորութիւն է, որի անհրաժեշտութիւնը և ոյժը պէտք է զգան անհատները նոյնքան խոր կերպով, որքան նրանք զգում են անձնական իրանց կեանքի միւս պարտաւորութիւնները։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱԳՈՒԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏՈՒՆԸ

Բագուի հայոց Մարդասիրական ընկերութեան աչքի ընկնող բազմաթիւ ծառայութիւններից մէկը, անկասկած, պէտք է համարել և նրա աշխատանքի տունը, որ գոյութիւն ունի 1901 թ-ի յունիսից։

Թէ որ աստիճանի համակրելի հիմնարկութիւն է առհասարակ աշխատանքի տունը, այդ հարցի մասին մենք երկար չենք խօսի, որովհետև այժմ ամենքի համար պարզ է, թէ աշխատանքի միջոցով ողորմութիւն տալը ամենայարմարագոյն օգնութիւնն է, որ մենք կը հացնենք աղքատ դասակարգին։ Տուէք աղքատին գործ, որ նա պարապ փողոցներում չը թափառի, որ նա սովորի իր մաքուր աշխատանքի միջոցով ապրել։

Այժմ տեսնենք՝ Մարդասիրական ընկերութեան աշխատանքի տունը կարողացել է դէթ մի ծառայութիւն անել Բագուի պէս մի մեծ արդիւնաբերական կենտրոնում, ուր ժողոված է գործ փնտրողների մի ստուար մեծամասնութիւն և ուր վերջին 2—3 տարվայ ճգնաժամի չնորհիւ աղքատների, փողոցներում մընացածների թիւը եռապատկվել-քառապատկվել է։ Ըստ երեւոյթին այսպիսի կենտրոններում աշխատանքի տները լցված պէտք է լինեն աշխատողներով։ Սակայն իրականութիւնը բոլորովին հակառակ պատկեր է ներկայացնում։ Արդեօք ինչն է պատճառը։

Այս տարի մեզ վիճակված էր Բագուի հայոց Մարդասիրական ընկերութեան 1902 թ-ի հաշիւները կազմելը։ Ես առանձին ուշադրութեամբ նայեցի աշխատանքի տան հաշիւներին, որտիս մօտ ընդունելով այդ տեսակի հիմնարկութիւնները։

Աւելորդ չեմ համարում ծանօթացնել «Մշակի» յարգելի ընթերցողներին այդ տան 1902 թ-ի համառօտ տեղեկագրի հետ։

Աշխատանքի տան անմիջական կառավարութիւնը կենտրոնացած է եղել առանձին կոմիտէի ձեռքում, բաղկացած 12 հոգուց, որոնցից 3-ը ընկերութեան վարչութեան անդամներից են, իսկ մնացածները՝ ընկերութեան անդամներից հրաւիրված տիկիններ և պարոններ։ Բացի կոմիտէից, աշխատանքի տունը ունի նաև առանձին կառավարիչ, որին յանձնված է գործերի անմիջական հսկողութիւնը և ներքին կարգապահութիւնը։

1902 թ-ի սկզբին աշխատանքի տան մէջ եղել են հետեւեալ բաժանմունքները. կար ու ձևի, ուռկաններ գործելու, կազմարարական, լուացարան, ատաղձագործարան, պակլի մաքրելու, չէմոդաններ պատրաստելու,—բացի դրանից պատրաստվելիս են եղել ահագին քանակութեամբ թղթէ տոպրակներ, բոնոցներ և տուփեր։ Սակայն այդ բաժանմունքներից մի քանիսը շուտով փակել են, որովհետև նախ՝ պահանջում են մեծ ծախսեր, իսկ երկրորդ՝ խիստ մասնագիտական բնաւորութիւն են կրում։

1) Հաշուետարվայ ընթացքում ծախս է եղած աշխատանքի տան վրա 8395 ր. 83 կ. 2) առ 1-ն յունվարի 1902 թ-ի մնացորդ իրեղէնների և 1902 թ-ի հաշուին ծախսեր են եղել 2177 ր. 35 կ։ Մուտք է ունեցել 5132 ր. 9 կ. իրեղէնների և ծախսերի մնացորդից առ 1-ն յունվարի 1903 թ. 2156 ր. 92 կ., վնասն է 3284 ր. 17 կ։ Հաշուետարվայ ընթացքում աշխատանքի տանն աշխատել են 824 հոգի, որոնցից 144 կանայք են, 145 տղամարդիկ և 525 երեխաներ երկու սեռի։ Բոլորը միասին աշխատել են 13922 օր, որոնցից կանայք աշխատել են—2430 օր, տղամարդիկ—2752 և երեխաները—8740 օր. վարձ տուած է 1676 ր. 7 կ. միջին թուով 12,29 կ. իւրաքանչիւր օր և բացի դրանից աշխատողները ստացել են ձրի ճաշ և առաւօտները թէյ, շաքար և հաց, որը ընկերութեան նստում է մօտ 11 կոպ.։ Ուրեմն իւրաքանչիւր բանւորը ստացել է միջին թուով 23,29 կ. վարձ, որը յամենայն դէպս բաւարար պէտք է համարել, ի նկատի առնելով այն վարձը, որ տրվում է պետական աշխատանքի տներում։ Չը պէտք է նաև մոռանալ, որ այս աշխատանքի տան գործողների մեծամասնութիւնը երեխաներ են, որոնց համար բաւական յարմարութիւններ են ստեղծված։ Այդպէս, նրանք ամառը աշխատել են 8 ժամ, իսկ ձմեռը 6 ժամ։

Կանայք աշխատել են գլխաւորապէս կար ու ձևի բաժանմունքում և ուռկաններ են գործել։ Տղամարդիկ պակլի մաքրել՝ ատաղձագործարաններում, կազմարարական բաժիններում, իսկ երեխաները բացի պակլի մաքրելու բաժանմունքից, գործել են համարեա բոլոր բաժանմունքներում։ Միջին թուով իւրաքանչիւր օր աշխատել են մօտ 46 հոգի։

Մի այսպիսի քաղաքում, ինչպիսին է Բաքուն, մանաւանդ ներկայ պայմաններում, երբ պարապների թիւը շատ է, աշխատանքի տանը աշխատողների թիւը իւրաքանչիւր օր պէտք է հասնէր մօտ 200-ի, եթէ ոչ աւել։ Սակայն ինչո՞ւ է 46։ Այդ հարցը իսկապէս ինձ շատ հետաքրքրեց։ Արդեօք վարչութիւնն է մեղաւոր, թէ վարձն է քիչ։ Ես իսկապէս համեմատեցի նշանաւոր աշխատանքի տների վարձատրութեան հետ և գտայ, որ Մարդասիրական ընկերութեան աշխատանքի տանը անհամեմատ վարձը բարձր է։ Տալիս են նաև ձրի ճաշ, թէյ, շաքար և հաց։ Ուրեմն աղքատի մի շարք կենսական պահանջները բաւարարութիւն են ստանում։ Հայերի մէջ աշխատանքի տները

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՏԿԵՐՆԵՐ
ՐԱՖՖԻԻ ԿԵԱՆՔԻՑ

„Քաղցրախօս պօվէտ քու անուշ լեզուն,
Քնարդ ներդաշնակ, հոգիդ զգայուն“.
Գ. Քատիպա

Գլուխ I

Շատ ու շատ տարիներ անցան այն օրից, երբ մեր վիպագիր—հրապարակախօս Րաֆֆին մեռաւ և հողին յանձնվեց։ Պատմութեան առաջ պատասխանատու չը մնալու համար անհրաժեշտ կարիք կար, որ պարսկահայերի կողմից հաւաքաբար խմբագրվէր պարսկաստանցի բանաստեղծի լիակատար կենսագրութիւնը։ Մի բան, որ մինչև օրս առանց հետևանքի մնաց։ Տխուր իրողութիւն։ Եւ որքան գնում, այնքան զգալի է դառնում այն բաց տեղը, որ թողել է Րաֆֆին։

Բազմաթիւ բարեկամներ, թէ Կովկասից և թէ Պարսկաստանի այլ և այլ քաղաքներից, դիմեցին ինձ, նոյնպէս և յարգելի տիկին Րաֆֆին՝ յորդորելով, որ մեր վիպասանի կենսագրութիւնը ես գրեմ, իբրև նրան խիստ մօտից ճանաչող։ Եւ արդարև իմ կողմից աններելի զանցառութիւն կը լինէր չը գնահատել նրա հազուագիւտ տաղանդը։ Ես կրկնակի պարտաւորութիւն ունէի։ Ինձ դիմողները լաւ գիտէին արդէն, որ Րաֆֆին և ես, մեր երիտասարդութեան օրից սկսեալ մինչ նրա մահը՝ եղել ենք խիստ մտերիմ բարեկամներ, այլ և միասին երկար ժամանակ եղել ենք Սալմաստում, Ուրմիում, Թաւրիզում և մի կարճ ժամանակ էլ Թիւրքաց Հայաստանում, իսկ երբ եղել էինք տարբեր տեղերում, չարունակ թղթակցել ենք միմեանց հետ։

Արդէն 60-ական թւականներից էլ առաջ, ես ծանօթացել էի Րաֆֆիի և նրա ընտանիքը կազմող անդամներից շատերի հետ։ Նրանցից զանազան ժամանակներում հարցուփորձով բազմաթիւ ուշագրաւ տեղեկութիւն եմ հաւաքել նրա մանկութեան ժամանակի վերաբերութեամբ։ Որից յետոյ մի պահանջ դարձաւ ինձանում հետաքրքրվել թէ նրա գրական գործունէութեամբ և թէ նրա կեանքում պատահած երեւոյթներով։ Դրանցից շատերը ես գրի եմ առել և հաւատարմութեամբ պահել մինչև այսօր այն ամենը, ինչ որ ես անձամբ տեսել եմ, լսել և ստուգել վստահելի աղբիւրներից, շատ անգամ էլ դիմելով յիշողութեանս։ Եւ որպէս զի քանքարաթագոյց չը լինեմ, ահա այսօր ես նրանց հաւաքելով հրապարակ եմ հանում, նախապէս խոստովանելով, որ իմ ներկայ աշխատութիւնը հեռու է Րաֆֆի ամբողջ կենսագրութիւնը լինելուց։

Ես միայն մի քանի քայլ առաջ գնալով հող պատրաստեցի նրա ապագայ կենսագրութիւնը կազմողի համար, որպէս մի նախերգանք։ Ես վստահ եմ, որ շատ չանցած դուրս է գալու մի նոր հոսանք, որ պրպտելով և թափանցելով անցած գնացած եղելութիւնների խորքերը՝ բազմակողմանի նկարագրելով, դուրս է բերելու նրա ամբողջ կենսագրութեան ընդհանուր գծերը։ Եւ որովհետև Րաֆֆին «Մշակով» ծանօթացաւ հայ գրական աշխարհին, «Մշակով» էլ ահա նրա կեանքի պատկերները տալիս եմ ընթերցող հասարակութեան։

Հանգուցեալ Րաֆֆի—Յակոբ Մելիք-Յակոբեանցը ծնվել է 1835 թւականին Սալմաստի հայաբնակ Փայաջուկ գիւղում։ Նրա հայրը, Մելիք Միրզա-բէգը՝ մի հարուստ վաճառական էր իր ժամանակի առևտրական շրջանում, այնպէս որ նա մի լաւ հռչակ էր ստացել Սալմաստում, Խոյում, Ուրմիում, Թաւրիզում և Թիֆլիսում։ Նա Փայաջուկ գիւղի ժառանգական մելիքն էր, ինքը և իր եղբայր Մելիք Սարգիսը հերթով վարում էին այդ պաշտօնը։

Սալմաստի հայ ծերունիների պատմելով՝ այդ ընտանիքը շատ վաղուց բնակված է Փայաջուկում, ունենալով մելիքութեան իրաւունք նոյն գիւղի վրա։ Մինչև օրս էլ այդ արտօնութիւնը պատկանում է նոյն ընտանիքից եղած շառաւիղներին։ Մելիք Միրզա-բէգի ընտանիքը կազմում էին՝ նրա պատկառելի կինը, ինը աղջիկներ և չորս որդիներ, որոնցից մեծը Րաֆֆի—Յակոբն էր, որին անպիսի տաղանդ էր տուած, որ մի օր նա իր գրուածքներով մի մեծ յեղափոխութիւն պիտի ձգէր հայ գրական աշխարհում։

Ծերունի Մելիք-Միրզան, որին ես անձամբ տեսել և խօսակից եմ եղել, մի խիստ համակրելի, նահապետական մարդ էր, բնութիւնից օժտված գեղեցիկ յատկութիւններով։ Նա թէև կրթված չէր, բայց կրթութեանն էլ ատողներից չէր։ Մելիք-Միրզան Թիֆլիս գնալով, ծանօթացել էր այնտեղի հայ և ռուս դպրոցների հետ, որոնք լաւ տպաւորութիւն էին թողել նրա վրա. դառնալով Սալմաստ միշտ խօսում և աշխատում էր հայ գիւղերում դպրոցներ բանալու համար։ Նրա համեստ և սիրալիր հիւրասիրութեանը սահման չը կար։ Նրա տունը համարեա թէ գիւղական հիւրանոց էր այն ամեն օտարական հայի համար, որ մուտ գործէր Սալմաստ։ Ատրպատականի թեմակալներից շատերը ամիսներով հիւրասիրվել են նրա տան մէջ։ Նոյն իսկ Խրիմեան Հայրիկը (այժմեան Վեհափառ Կաթողիկոսը) 1861 թուականին Ատրպատական գալով՝ երբ Սալմաստ ժամանեց, նրա տան մէջ հիւրասիրվեց։ Մի խօսքով նրա սեղանը միշտ բաց էր Աստուծոյ հիւրի առաջ։ Մելիք-Միրզան իր գիւղական տունը և ընտանիքը կառավարելու համար պահում էր բազմաթիւ կաթնատու և մշակութեան օգտակար անասուններ և ձիեր։ Նա մշակում էր իր արտերը, պարտէզները և խնամք էր տանում իր ջրաղացների վրա։ Նրա տան մի կողմը՝ հայ գիւղացիական էր, իսկ միւս կողմը արիստոկրատական ընդունարան՝ լաւ կահաւորած, որպէս քաղաքի ճաշակաւոր տուն։ Նա թէ հայ գիւղացի էր՝ արօրն ու մաճը ձեռքին, թէ վաճառական էր՝ առևտրական գործերով զբաղված։ Պէտք է աւելացնեմ, որ նրա տունը մի և նոյն ժամանակ գիւղական հաշտարար դատարան էր՝ գիւղացիների վէճերը լուծելու համար։

Թէ Մելիք Միրզայի և թէ սալմաստեցի բազմաթիւ հայ վաճառականների առևտրական գլխաւոր պարապմունքն էր չիլայ պատրաստել իրանց գիւղերում։ Դա մի տեսակ բամբակէ հատ կտաւ էր, որ յետոյ իրանց սեփական հողերում մշակած տօրանի կարմիր գունով ներկել տալով, ահագին քանակութեամբ

նոր հիմնարկութիւններ են, նրանք դեռ հաւատով չեն վերաբերվում, մեծամասնութիւնը խոյս է տալիս այնտեղ գործելուց, առանց որ և է պատճառաբանութեան։ Մարդասիրական ընկերութեան վարչութիւնը իր խնդրատուներին, եթէ նկատել է, որ այս կամ այն աշխատանքի ընդունակ է, առաջարկել է գործ, բայց նրանք հրաժարվել են գործից, ասելով թէ սովոր չեն այդպիսի տներում գործել։ Փորձում էք համոզել, թէ յամենայն դէպս ապատեղ աշխատել անհամեմատ լաւ է, քան մուրալը, նրանք լսել անգամ չեն ուզում։ «Տարէք մեզ կենդանի գերեզմանի մէջ դրէք, այդպիսի տեղ մի ուղարկէք»։ Ի հարկէ վարչութիւնը ստիպված է մերժել այդ տեսակի մտածողներին, որը առիթ է տալիս բազմաթիւ գանգատների և նոյն իսկ զրպարտութիւնների։ Եւ իրաք հարկաւոր է ստիպել նրանց աշխատանքի միջոցով հայթհայթել իրանց օրական պարենը, թէ չէ փող տալով նրանց մենք ուղղակի ձրիակերութիւն ենք սովորեցնում։ Մեզ թւում է, թէ վարչութիւնը անում է ինչ հնարաւոր է, վարձատրութիւնը քիչ չէ, այլ շատերը սովորել են մուրալ և չեն ուզում յետ կենալ իրանց պախարակելի սովորութիւնից։ Կան և այնպիսիները, որոնք ամենայն սիրով աշխատում են և գոհ են իրանց դրութիւնից։ Եթէ մէկ բաժանմունքում գործը պակասում է, փոխադրում էք միւս բաժանմունք, նա ուրախութեամբ աշխատում է այդ նոր բաժանմունքում, մինչև որ նոր պատուէրներ ստացվեն այն բաժանմունքում, ուր նա առաջ աշխատում էր։

Բայց և այնպէս նկատվում է, որ գնալով աշխատողների թիւը աւելանում է, սակայն պատուէրների պակասութիւն է զգացվում։ Բպուի հասարակութիւնը պիտի աշխատի այդ հիմնարկութիւնը պահպանել և նա կարող է անել առանց նեղութեան։ Հարկաւոր է միայն պատուէրներ ուղարկել։ Այժմ բաւական մաքուր են կատարվում պատուէրները և բոլորովին վստահ կերպով կարելի է յանձնել այս կամ այն գործը։ Եթէ պատուէրներ լինեն անընդհատ, հաւանական է, որ աշխատանքի առնը բոլորովին վնաս չի տալ, մանաւանդ այսուհետև։ Այս տարի յունիսի 1-ին Մարդասիրական ընկերութեան աշխատանքի տունը և ճաշարանը կը տեղափոխվի սեփական տունը, որը կառուցվում է Ստանիսլավսկայա փողոցում։ Մինչև այժմ գտնվում էր ուրիշի տանը, որի համար վարձ է տրվում 1600 րուբլի։

Ընկերութեան նորակառոյց տունը չինվում է հանդուցեալ Գրիգոր Թումայեանի ժառանգների նուիրած 30,000 րուբլիով։ Նրան կից բաղուեցի Լուդվիկ Սէրգեանը աղքատ ընտանիքներ բնակեցնելու համար չինում է 17 բնակարաններ, բաղկացած մի սենեակից և մի խոհանոցից։ Թումայեանների հաշուով չինվելիք տանը բացի աշխատանքի տնից, ճաշարանից, կարելի է բնակեցնել նաև 28 աղքատ ընտանիքներ, յատկացնելով իւրաքանչիւրին մի-մի սենեակ։

Այդ երկու տունն էլ չինվում են քաղաքի յատկացրած հողաբաժնի վրա—տարածութեամբ 1400 քառ. սաժէն։ Այդ հողաբաժնի վրա ազատ տեղ դեռ շատ կայ և մենք հրաւիրում ենք մեր հարուստների ուշադրութիւնը—նրանք կարող են նոր նոր բնակարաններ չինել այնտեղ, ազատելով բազմաթիւ ընտանիքներ գետնափորներից, ուր նրանց վիճակված է լինում յաճախ այնպիսի վիրաւորարքներ կրել տանտէրերից, որից մարդու մարմինը փաղաքշվում է։

Աշխատեցէք զարոններ այդ բնակարանների թիւը աւելացնել, սա կը լինի ձեր ամենամեծ ծառայութիւնը։

Ֆ. Մարդանեան

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Մարտի 9-ին

Այս մեծ պասի երրորդ շաբաթը մեզանում ամենայն իրաւամբ կարող է կոչվել Սիրանոյշի շաբաթ, որը մի շատ հազուագիւտ ու շատ ուրախալի երեոյթ էր մեր քաղաքի հայ հասարակութեան տաղտկալի, թմրած, «դախլի, դաւթարի, չօտկի ու արշինի» շուրջը պտտվող ու նրանցից միայն հոգի, կենդանութիւն ստանող կեանքում։

Տիկին Սիրանոյշն իր խմբով, ասաը հոգուց բաղկացած, այցելեց Գանձակը ու երեք ներկայացում տուեց տեղիս կլուբի դահլիճում. ներկայացումները կայացան ամսիս 4-ին, 6-ին ու 8-ին։ Առաջի ներկայացմանը խաղացին Զուդերմանի «Հայրենական տունը», երկրորդին Օստրովսկու «Անմեղ մեղաւորները», իսկ երրորդին «Աչտանակ կամ ապահարզան» ու Պարոնեանի «Բաղդասար աղբարը»։ Բոլոր ներկայացումներն էլ մուտքի կողմից գերազանց աջողութիւն ունեցան. դահլիճում, այսպէս ասած, ասեղ գցելու տեղ չը կար. կանգնած հանդիսականներն իրանց թեով նստածներից պակաս չէին։ Հանրային բուռն հետաքրքրութիւն յարուցանող այդպիսի հայերէն ներկայացումներ մենք չէինք տեսած Գանձակում։ Հանդիսականների մէջ աչքի էին ընկնում նաև օտարազգիներ—ռուսներ, բայց ոչ վրացիք, չը նայած, որ մի շաբաթ առաջ հայերը ստուար բազմութեամբ լցել էին նրանց երեկոյթը։ Մի հատ վրացի միայն մեր աչքով ընկաւ։

Բոլոր պիեսներում էլ տիկին Սիրանոյշն իր դերերում շատ լաւ էր, անմոռաց էր համարեա։ Միւս դերասաններից աչքի էին ընկնում տ. տ. Աւետեան ու Փառանձեմ, պ. պ. Վրոյր, Աւետեան, Ալիխանեան ու Աղայեան, որոնցից մի երկուսը սակայն երբեմնակի աչքի ընկնող սխալներ էին անում, աղաւաղում էին բառեր ու ամբողջ դարձուածքներ։ Այդ չարիքը, որը մի տեսակ քրոնիկական ախտի բնաւորութիւն է կրում, կարծես մեր դերասանների ոսկրի ծուծն է մտել, որտեղից նրան դուրս քշել անկարելի է։ Գուցէ մեր յարգելի դերասանները կարծում են, թէ գաւառական բեմի վրա «գաւազանաւ երկաթեաւ» չէ վարվել իր աշակերտների հետ,—այլ միայն ապտակահարութեամբ։

Անա այդ դպրոցումն է առել Բաֆֆին իր նախնական ուսումը։ Բաֆֆին ինձ պատմել էր, որ ինքն էլ մի քանի անգամներ յանդիմանութեան ապտակներ ստացել էր իր ուսուցչից դասերի համար, որովհետև նրանք չափազանց դժուար էին։ Բայց ինքը միւս աշակերտների պէս չէր փախել դպրոցից, ընդհակառակը մի քանի անգամ էլ ինքն է գոռացել իր վարժապետի վրա և դիմադրել, երբ նա իր ընկերակիցներին տեսել է սոսկալի ապտակահարութեան տակ։ «Դու ինչու՞ ես խառնվում, Յակոբ, երբ ես իմ աշակերտներին ապտակում եմ, ասել է ուսուցիչը, հո քեզ չեմ պատժում»։— Մի և նոյն է, պատասխանել է պատանի Բաֆֆին, մի օր էլ ինձ այդ օրին կը գցես։

Բաֆֆին իր մանկութեան օրերում եղել է շատ յանդուգն և շատ սրամիտ։ Գիւղական դպրոցից տուն վերադառնալով, նա երբէք հանգիստ չէր մնում։ Ինձ պատմեցին, որ բացի իր համար յատուկ մանկական խաղեր և զուարճութիւններ որոնելուց, նա կը ստիպէր իր պառաւ տատին և մօրը մանաւանդ ձմեռվայ երկար գիշերներում, որ շարունակ հրէշների զրոյցներ, կախարդական հմայքներ, առասպելներ և հէքիաթներ պատմեն և ինքն էլ կը լսէր ականջները լարած։ Բաֆֆին իր մանուկ ժամանակից սիրել է հէքիաթներ, հին զրոյցներ, դիւական և ճիւաղական արշաւանքների պատմութիւններ լսելը, որոնցով էլ նա իր միտքը սրել է։ Մանուկ Բաֆֆին իրանց տան հիւրերին էլ շատ անգամ ունկնդիր կը լինէր նրանց խօսակցութիւնը լսելու համար և երկար նրանց կը նայէր, նկատելու համար թէ նրանք ինչ տիպեր ունեն, որպէս զի նրանց նկարէ թղթի վրա։ Թէև անհեթեթ, բայց վերջապէս նա գծագրում էր մի դէմք, որքան որ մի մանուկ կարող էր նկարել և, վերջացնելով իր գծագրածը, ցոյց կտար ամեն մի հանդիպողին։

Ով որ մօտից ճանաչել է Բաֆֆիին, նա անշուշտ նկատած կը լինի, որ նա նկարչութեան ձիրք և ճաշակ ունէր։ Բաֆֆին իր այդ ճաշակն առաջ տանելով, մի ժամանակ գեղեցիկ կերպով նկարում էր մարդկանց պատկերներ, ծաղիկներ, աշխարհագրական քարտէզներ և այլն։ Մանաւոր սէր էլ ունէր հրացան գործածելու և ձի հեծնելու վրա, որ սովորել էր հէնց իրանց տանը և իրանց գիւղում։ Կարդալու և սովորելու մէջ այնքան յաջողակ է եղել Բաֆֆին, որ թէ իր ծնողներին և թէ իր ուսուցչին զարմացրել է։

Նրա հայրը շարունակ նկատելով, որ իր Անդրանիկ որդի Յակոբի մէջ մի մշտավառ կրակ կայ դէպի ուսումն ու կրթութիւնը, մի օր նրան ասում է. «Յակոբ, մեր այս Փայաջուկի դպրոցից բան չի դուրս գայ, արի քեզ հետս Թիֆլիս տանեմ, այնտեղ լաւ դպրոցներ կան, թէ լաւ հայերէն կը սովորես, թէ ռուսերէն և թէ առուտուր, որ մեզ շատ պէտք է»։ Պատանի Բաֆֆին, որ արդէն Տէր-Թորոսկեան տաժանակիր դպրոցը հազիւ թէ աւարտելով այնտեղից հեռացել էր, այլ ևս իր հօր օձիքը բաց չը թողեց, շարունակ ստիպելով նրան, որ մի օր առաջ Թիֆլիս գնանք։

Բաֆֆին, որպէս ուշիմ պատանի, սկսել էր թէ իր հօր գործերի մէջ պիտանի լինել և թէ թողեց ձիաները, սանձնեց նրանց դերը, լծվեց կառքում ու աղմկայոյզ ցոյցերով, երգերով, տարաւ իր պաշտելի դերասանուհուն նրա ինչևանած հիւրանոցը։ Երիտասարդութեան այդ ոգևորութիւնը գովելի է, պախարակել չեմ կարող, թէև այնքան աղմուկ ու իրարանցում հարկաւոր չէր, անտեղի ու անյարմար էր նոյն իսկ, բայց աւելի կը գովէի եթէ այդ երիտասարդութիւնը ու կը ոգևորվէի նրանով ու նրա արածներով, եթէ նա նոյնպիսի ոգևորութիւն, միայն անաղմուկ, լուրջ, մշտական, ոչ-բպէական, այլ յարատև, ցոյց տարդէպի իր մայրենի լեզուն ու գրականութիւնը ու չը նսեմացնէր իր արդի կամ ապագայի դիպլոմը այսպիսի «հրաչալի ու չքեղ» բարբարոսաբանութիւններով։

... «Ծայտոնի ձիաները բասպրեագատ ըրինք, մենք զապրեագատսեա ըլանք ու Սիրանոյշին ս պենիեմ տարանք դասինցա...»... «Սիրանոյշը իմ անունը զապիատ արաւ իր պատեատնի կնիժկումը ու ցվետօչնի կարգինից մի վարդ տուաւ ինձ...»... «Դուրս եկաւ բալկօնը բենգալսկի ազօնի լուսումը կանգնեց ու մեզ վազդուչնոյ պացելոյներ ուղարկեց...» ...«Ես պրօստո Սիրանոյշի վրա վլիբիտսեա եմ ըլել, սամ նե սվոյ, քիչ ա մնում թէ զասրելիտսեա ըլեմ...»

Ստ. Տէր-Աւետիքեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, մարտի 10-ին

Որովհետև սրիկայամիտ մարդիկ Վեհափառ Հայրապետին հաւատացրել են, որ ես 1902 թ. Շամախու երկրաշարժի ժամանակ 1½ ամսվայ իմ երթևեկութեան Շամախի—Թիֆլիս—Բագու (երկու անգամ) և այլ ծախսերի համար Բագուի բարեպաշտօն ազգայիններից ստացել եմ կամ ինչպէս Հայրապետական տարոյս մարտի 6-ի № 295 գրութիւնն է ասում. «Ծախքն Ձեր և այլ ընկերաց Ձերոց հոգացեալ էր ծախիւք բարեպաշտօն ազգայնոց Բագուայ», ուստի խնդիրը հասարակական նշանակութիւն ունենալու պատճառով, հրապարակով յայտնում եմ, որ այդ բոլորն ինչ վերաբերում է ինձ, յանդուգն և անամօթ զրպարտութիւն է։ Ինչ վերաբերում է իմ ընկերակիցներին, այդ նրանց գործն է, իսկ ինձ համար այնքանը կասեմ, որ յիշեալ ազգայիններից ես ոչինչ չեմ ստացել իմ ծախսերի համար։ Մերոնազարդ Հայրապետին մոլորեցնողները թող բարեհաճեն հրապարակով յայտնել իմ ծախսերս հոգացող ազգայինների անունները. ես տալիս եմ նրանց 20 օր ժամանակ, որից յետոյ ես կանեմ այն, ինչ մարդկային պատիւս կը թելադրէ։

Խոնարհաբար խնդրում եմ յարգելի խմբագրութիւնից տեղ տալ իմ ներկայ նամակիս «Մշակի» մերձակայ համարներից մէկում։

Արսէն վարդապետ Ղլդճեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, մարտի 10-ին

Այսօր ստացայ «Արարատ» ամսագրի 1902 թ. յուլիս-օգոստոս ամիսների միացած №-ը։

արտահանում էին Թիֆլիս և վաճառում, որի մէջ ժամանակին մեծամեծ գումարներ շահեցին։

Բաֆֆիի մայրը, որ մինչև օրս էլ կենդանի է, մի խիստ քաղաքավարի և բարեպաշտ կին է։ Նրա խնամքներով էր կառավարվում Բաֆֆիի հայրենի օջախը, որ ծիրում էր գիւղական լիառատ բարիքների մէջ։ Եթէ Մէլիք-Միրզան տան արտաքին գործերն էր կարգադրում, որպէս այր մարդ, տան ներքին գործերն էլ նրա տնարար կինն էր կարգի բերում։ Օր չէր անցնի, որ նրանց տանը մի քանի հիւրեր չը լինէին։ Օր չէր լինի, որ մի քանի չքաւորներ և թշուառներ չը կերակրվէին նրանց տան թոնրից դուրս եկած թաժայ հացից, կաթն ու թանապուրից, կամ ինչպէս իրանք էին ասում Աստուծու տուածից։ Ահա մի այդպիսի չէն տանից էր Բաֆֆին։

Այժմ դառնում եմ դէպ ի Բաֆֆիի մանկութիւնը։

Գ լ ո ւ խ II

Փայաջուկի գիւղական դպրոցում եղել է մի վանեցի հայ ուսուցիչ, որի մօտ գնում էին գիւղի առաջաւոր մարդկանց որդիքը մի քիչ հայերէն սովորելու, այն էլ գրաբառ՝ ուրթ կանոն Սաղմոսի, Աւետարանի և խրթնալեզու Նարեկի վրա։ Եղել է և արհեստ, այսինքն քերականութիւն, այն էլ կամաւոր, իսկ միւսները պարտադիր են եղել. յիսունական թուականներում դրանից աւելի էլ չէր կարելի ոպասել։ Գրաբառ լեզուն և տիրացու վարժապետները այդ դարաշրջանում իրանց ճիրանների մէջ էին պահում ժամանակի դպրոցները։ Այդ դպրոցի վարժապետը անուանի է եղել նրանով, որ թողեց ձիաները, սանձնեց նրանց դերը, լծվեց կառքում ու աղմկայոյզ ցոյցերով, երգերով, տարաւ իր պաշտելի դերասանուհուն նրա ինչևանած հիւրանոցը։ Երիտասարդութեան այդ ոգևորութիւնը գովելի է, պախարակել չեմ կարող, թէև այնքան աղմուկ ու իրարանցում հարկաւոր չէր, անտեղի ու անյարմար էր նոյն իսկ, բայց աւելի կը գովէի եթէ այդ երիտասարդութիւնը ու կը ոգևորվէի նրանով ու նրա արածներով, եթէ նա նոյնպիսի ոգևորութիւն, միայն անաղմուկ, լուրջ, մշտական, ոչ-բպէական, այլ յարատև, ցոյց տարդէպի իր մայրենի լեզուն ու գրականութիւնը ու չը նսեմացնէր իր արդի կամ ապագայի դիպլոմը այսպիսի «հրաչալի ու չքեղ» բարբարոսաբանութիւններով։

... «Ծայտոնի ձիաները բասպրեագատ ըրինք, մենք զապրեագատսեա ըլանք ու Սիրանոյշին ս պենիեմ տարանք դասինցա...»... «Սիրանոյշը իմ անունը զապիատ արաւ իր պատեատնի կնիժկումը ու ցվետօչնի կարգինից մի վարդ տուաւ ինձ...»... «Դուրս եկաւ բալկօնը բենգալսկի ազօնի լուսումը կանգնեց ու մեզ վազդուչնոյ պացելոյներ ուղարկեց...» ...«Ես պրօստո Սիրանոյշի վրա վլիբիտսեա եմ ըլել, սամ նե սվոյ, քիչ ա մնում թէ զասրելիտսեա ըլեմ...»

Ստ. Տէր-Աւետիքեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, մարտի 10-ին

Այսօր ստացայ «Արարատ» ամսագրի 1902 թ. յուլիս-օգոստոս ամիսների միացած №-ը։

իրանց գիւղացիական-մշակական գործերում օգտակար լինել, այնպէս որ նրա ընտանիքի անդամները մի առանձին համակրական հայեացքով էին նայում նրա վրա։ Ամբողջ ընտանիքի աչքը Բաֆֆիի վրա էր, որպէս իր հօր արժանաւոր յաջորդի, իսկ Մէլիք-Միրզան էլ շարունակ ասում էր, թէ «իմ Յակոբի հատը ողջ Սալմաստում չը կայ»։

Վերջապէս դրանից մի կարճ ժամանակ յետոյ 16 տարեկան Բաֆֆին արդէն Թիֆլիսումն էր։ Նա մի քանի տարիներ մնալով Թիֆլիսում, իր ուսման ծարաւին յագուրդ էր տալիս, հայերէն լեզուն սովորելով Բէլախեան Կարապետ վարժապետից, որն այն ժամանակ Թիֆլիսում մեծ հռչակ ունէր, որպէս հայկաբան, իսկ ռուսերէնը և ուրիշ առարկաները նա սովորում էր Թիֆլիսի գիմնազիայում, որպէս պատրաստութիւն բարձրագոյն ուսում ստանալու համար։ Բայց այս վերջինը տեղի չունեցաւ, որովհետև հազիւ թէ նա գիմնազիան աւարտել էր, որ նրա ծնողները թախանձագին խնդրել էին նրանից, որ վերադառնայ Սալմաստ և ձեռք առնէ իրանց տան առևտրական գործերի ղեկը, նկատել տալով, որ նրա հայր Մէլիք-Միրզան ծերացել է և հիւանդագին դարձել, իսկ նրա եղբայրները անչափահաս են։

Բաֆֆին թէև յակամայից, բայց վերջապէս 1856-ին համոզվեցաւ վերադառնալ իր ծննդավայրը—Փայաջուկ, իր 21 տարեկան հասակում։

(Կը շարունակվի)

Միթէ կարելի է, որ 1902 թուի յուլիս-օգոստոս ամիսների №-ը ուղարկվի բաժանորդներին 1903 թ. մարտի 6-ին։ Այսքան էլ անտարբերութիւն։ Փառք Աստուծու կայ ապարանական վարչութիւն, ունեն կարդին տպարան, ձուլարան և ամէն յարմարութիւններ։ Կան բաւականին՝ թէ ռուսաստանում և թէ արտասահմանում կրթված երիտասարդ վարդապետներ։ Ո՞ւր են նրանք, ինչով են զբաղված, որ չեն կարողանում դէթ մի ամսագիր հրատարակել իր ժամանակին։ Տեղը բնկած ժամանակ մեծ մեծ են խօսում և դատում և մինչև անգամ ծաղրում, չը հաւանում Մխիթարեան հայրերին։

«Արարատի» բաժանորդ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի Հայոց Բարգաւորական Ընկերութիւնը ստացել է արդէն Կովկասեան կառավարչութիւնից կարևոր թոյլտուութիւնը բանալու որբ փոքրահասակ աղջիկների ապաստարան Խուդադեանի կտակած գումարով։ Ապաստարանը, որի պահպանութեան նախահաշիւը կորոշվի այս մարտ ամսի 23-ին տեղի ունենալիք ընկերութեան ընդհանուր ժողովում, հաւանականաբար կը բացվի այս տարվայ սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին և սկզբում իր մէջ կը պատապարէ 20—30 որբ աղջիկների։

—

Մարտի 8-ին տեղի ունեցաւ բարձրագոյն դպրոցներում սովորող կովկասցի ուսանողներին օգնող ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովը, որ վաւերացրեց վարչութեան հաշիւը անցեալ 1902 թուականի համար և հաստատեց ներկայ 1903 թուականի նախահաշիւը։ Ժողովը մի և նոյն ժամանակ խնդրեց վարչութեան անդամներ Անանովին, Էլչանինովին և Տակայշվիլիին, որոնք պէտք է հերթով դուրս գային վարչութեան կողմից, մնալ իրանց պաշտօնում։ Վերատուգիչ մասնաժողովի անդամ նորից ընտրվեցին Գուլամէ, Զուբարով և Թամամշեվ։ Երկար վիճաբանութիւնների տեղիք տուեց վարչութեան կողմից բարձրացրած այն հարցը, թէ արդեօք ունի նա իրաւունք ինքնաբերաբար հրաժարվելու որ և է նուիրատուութիւնից յօգուտ ընկերութեան, թէ այդ իրաւունքը պատկանում է միայն ընդհանուր ժողովին։ Այս հարցը ծագել էր այն 5% նուէրից հրաժարվելու առիթով, որ պէտք է ստանար վարչութիւնը Ալէքսէեվ-Մեսխիեվի հրատարակած «Армянскіе ученые и вопіющіе камни» գրքի վաճառումից։ Ընդհանուր ժողովը վերջի վերջոյ եկաւ այն եզրակացութեան, որ ընկերութեան կանոնադրութիւնը այդ իրաւունքը չէ տալիս վարչութեան։

—

Մեզ ուղարկված է այն երեկոյթի հաշիւը, որ տրվեց անցած փետրվար ամսի 15-ին Թիֆլիսի ժողովարանի դահլիճում ձրի և էժանագին ճաշարանների ընկերութեան օգտին։ Հաշուից երևում է, որ մուտք ստացվել է տոմսակներից, պրէմիաներից, բուֆէտից և պօստից ընդամենը 1887 ռուբլի 17 կոպէկ, իսկ ծախք եղել է երեկոյթի կազմակերպութեան համար—ընդամենը 288 ռուբլի 5 կոպէկ, այնպէս որ զուտ արդիւնք մնացել է 1599 ռուբլի 10 կոպէկ։ Ընկերութեան կոմիտէը սրա հետ միասին իր պարտքն է համարում խորին շնորհակալութիւն յայտնել այն բոլոր անձերին, որոնք նպաստեցին գործի աջողութեան, ինչպէս նաև նրանց, որոնք մասնակցեցին կոնցերտային բաժանմունքին, պրէմիաներ տուին և երեկոյթի յայտարարութիւնը ձրիաբար իրանց լրագրում տպող խմբագրութիւններին։

—

«Одес. Нов.» լրագրին հեռագրում են Պետերբուրգից, որ Բաթումի շրջանը կազմելու հարցը արդէն վերջնականապէս վճռված է։ Այդ նոր շրջանը կը կազմվի Բաթումի և Արթուինի գաւառներից, սկսած այս 1903 թուականի յուլիսի 1-ից։ Շրջանային կենտրոնական վարչութեան տեղը կը լինի Բաթում քաղաքը։

—

ՇԱՄՇԱԴԻՆԻՑ մեզ գրում են. «Շնորհիւ մեր նոր գաւառապետի գործ դրած եռանդուն միջոցների, ամսիս 8-ին աջողվեց ապանել մեր գաւառամասի ամենավտանգաւոր աւազակներից Աբալ գիւղացի Սուլէյման և Ասադ եղբայրներին։ Սպանված երկու եղբայրների դիակները նոյն օրը գաւառապետը բերել տուեց Թովուզի կայարանը, լուսանկարել տուեց դիակները, և կանչել տալով շրջակայ գիւղերի հասարակութիւններին՝ ցոյց տուեց դիակները, խրատելով նրանց, որ ձեռք վերցնեն գողութիւնից և աւազակութիւնից և ապրեն խաղաղ ու ազնիւ միջոցներով։ Վերջացնելով իր խօսքը, յարգելի գաւառապետն ասաց. «Թող ամենքը իմանան, որ ազնիւ միջոցներով ապրողների մտերիմ բարեկամն եմ. իսկ գողերի ու աւազակների անհաշտ թշնամին»։

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են հետեւեալը. «Ինչպէս յայտնի է, Բօրժօմի կալուածքում գտնվող բոլոր 22 գիւղերի բնակիչները խիզաններ են և իրանց յատկացրած առանձին հողաբաժիններ (նադելներ) չունեն։ Այդ պատճառով կալուածքի վարչութիւնը պահանջում է կամ որոշ պայմաններ կապել՝ հողից կապալով օգտվելու, կամ հեռանալ կալուածքից, որովհետև ուրիշ կերպ չէ կարելի օգտվել հողից։ Այս պահանջը շատ էլ մեծ նշանակութիւն չունի գիւղացիների մեծամասնութեան համար, որոնք վարուցանքով և անասնապահութեամբ համարեա չեն պարապում, այլ գերաններ ու այլ փայտեղէն արտահանելով են զբաղված։ Սակայն վարուցանքով և անասնապահութեամբ պարապող գիւղերի համար դա էական նշանակութիւն ունի։ Այդպիսի գիւղերի թուին են պատկանում երկու հայաբնակ գիւղերը՝—Ղզըլ-Քիլիսան և Մօլիթը։ Սրանց էլ առաջարկված է կամ բոլոր վարելահողերն ու արօտները կապալով վերցնել և այդ պայմանով օգտվել հողերից, կամ հեռանալ։ Բայց այդ գիւղերը, աճրդի ժամանակ, նոյն-իսկ հաւաքական ուժերով չեն կարողացել մրցել հարուստ կապալառու Սանդաձէների հետ, որոնք կապալով վերցրել են այդ գիւղերի բոլոր վարելահողերն ու արօտները։ Այդ պատճառով Բօրժօմի կալուածքի վարչութիւնը դիմել է ուր հարկն է, որ այդ գիւղացիներին, իբրև ոչ կապալառուների, վերադարձնեն այն տեղերը, որտեղից գաղթած են։ Ղզըլ-Քիլիսայի մօտ 60 տունը մօտ 30 տարի սրանից առաջ գաղթած են մեր գաւառի Կորի գիւղից—33 տուն, Բարալէթից—19 տուն և Տրկնայից—5 տուն. իսկ Մօլիթի մօտ 25 տունը գաղթած են թէ մեր գաւառի Զագ և Տրկնա գիւղերից և թէ Ծալկայից։ Հիմա, ինչպէս իրանք գիւղացիներն են ասում, Կաղեռնայա պալատը այդ մտքով կարգադրութիւն է արել, բայց դեռ իրանց չէ հասել այդ կարգադրութիւնը։ Միւս կողմից էլ Կորի, Բարալէթ, Տրկնա և Զագ գիւղերը, իրանք սակաւահող լինելով՝ տրամադիր չեն յետ ընդունելու և հող տալու ներկայ ղզըլ-քիլիսեցիներին և մօլիթցիներին, որոնք իրանք էլ այն համոզմունքի են, որ չեն կարող ապրել այդ գիւղերում, մանաւանդ առաջին տարի։ Երում, մինչև որ իրանց էլ փոքրիկ հողաբաժիններ յատկացնվեն համայնական հողից։ Խեղճ ու անճար ղզըլ-քիլիսեցիներն ու մօլիթցիները չը գիտեն գլուխները որ քարին տան։ Եկել էին քաղաք՝ խնդիր տալու իրանց անորոշ և անելանելի դրութեան մասին։

—

ԴԻԼԻՋԱՆԻՑ գրում են մեզ հետեւեալը. «Ներկայ ուսումնական տարվայ սկզբից տեղիս հայոց երկսեռ դպրոցում կրօնի դասեր չեն աւանդվում աշակերտներին. հայոց լեզուն էլ անուանով միայն կայ. ձեռագործի դասեր էլ երբէք չեն աւանդվել և չեն էլ աւանդվում մեր աշակերտուհիներին։ Չը նայելով, որ մեր հայոց դպրոցը երկդասեանի անունով է վերաբացված՝ բայց նա, շնորհիւ մեր ժողովրդի անտարբերութեան, միշտ մնում է միդասեան։ Մի ուսուցչի վրա թողնել բոլոր առարկաները անկարելի է։ Ի՞նչպէս նա բարեխղճութեամբ կատարէ այնքան պարտաւորութիւններ։ Իւրաքանչիւր անգամ, երբ հարց է բարձրացնվում ժողովրդի մէջ երկրորդ ուսուցիչ, կամ հայոց լեզուի ուսուցիչ կամ ձեռագործի վարժուհի վարձելու մասին, մի քանի օր խօսում են, յետոյ թողնում։ Մեր ուսուցիչն էլ իր կողմից չէ խրախուսում ուսուցիչ հրաւիրելուն, մինչդեռ նա շատ զբաղված է. նա մի բոպէ հանդիստ չունի։ Զարմանալ կարելի է թէ՝ երբ է նա թէյ խմում, ճաշում, ընթրում, հանգստանում և գիշերը բաւարար չափով քնում, որպէս զի հնարաւորութիւն ունենայ միւս օրը իր դպրոցական սրբազան պարտքը բարեխղճօրէն կատարելու։ Նա բացի այն, որ դպրոցի կառավարիչ է, որ երեք բաժանմունքում աւանդում է ռուսաց և հայոց լեզուները և թուաբանութիւնը (բացի իր ուսուցչական ռոճկից հայոց լեզուի համար ստանում է 100—150 ռուբլի), ինչպէս մեզ պատմում են, ունի և մասնաւոր դասեր։ Հրաւիրում ենք մանաւանդ հոգևոր իշխանութեան ուշադրութիւնը կրօնի դասերի բացակայութեան և հայոց լեզուի խղճալի դասաւանդման վրա։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Ինչպէս հաղորդում է «Information» լրագրի Ժրնէվի թղթակիցը, Ժընէվում այս օրերս «Victoria Hall» դահլիճում կայացաւ միտինգ, որին ներկայ էին մօտ երկու հազար մարդ և ուր ճառեր արտասանեցին Պիէր Կիար և դոկտոր Լօրդի Հայաստանի և Մակեդոնիայի դրութեան մասին։ Ժողովին, որ կազմել էր «Հայասաանողների միութիւնը», նախագահում էր չվէյցարական դաշնակցութեան նախկին նախագահ Ադրիէն Լալնայ։ Ներկայ էին և համայսարանների շատ պրոֆէսօրներ և չվէյցարական աչքի ընկնող հասարակական գործիչներ։ Երկու հեռեսրներն ևս, լաւ ծանօթ լինելով Մակեդոնիայի և Հայաստանի դրութեան հետ, վառ գոյներով նկարագրեցին ազգաբնակութեան տանջանքները թիւրքական այդ նահանգներում։ Դոկտոր Լօրդի, չվէյցարացի բժիշկը, որը երկար ապրել է Կ. Պոլսում և մօտ յարաբերութիւններ էր պահպանում երիտասարդ թիւրքերի հետ, բայց այժմ հեռացել է նրանցից,—որովհետև համոզվել է, որ այդ շարժումը անպտուղ է և անմպատակ,—նկարագրեց տանջանքների և կռիւի պատմութիւնը Մակեդոնիայում։ Նա մեծ գովասանքով խօսեց մակեդոնական ապստամբների քաջութեան մասին և ասեց, որ աւստրոռուսական ռէֆորմները իբր թէ ոչին հետեւանքներ չեն ունենայ, որովհետև նրանք երբէք չեն իրագործվի։ Պիէր Կիարը խօսեց հայերի դրութեան մասին և ասաց, որ թիւրքաց կառավարութիւնը անդթութեամբ հալածում է հայերին այն պատճառով, որ նրանք եւրոպական կուլտուրայի ներկայացուցիչներ են հանդիսանում թիւրքիայում և մեծ առաջադիմութիւններ են անում քաղաքակրթութեան ճանապարհի վրա։ Հայկական յեղափոխական կազմակերպութեան վերաբերմամբ հռետորը նկատեց, որ միայն յեղափոխական ճանապարհով կարելի է ռէֆորմներ ձեռք բերել թիւրքիայից։ Թիւրքական դաշանութիւնների և ճնշումների պատկերները, որ նկարագրեցին երկու հռետորները, ցնցող տպաւորութիւն գործեցին ներկայ եղողների վրա։ Վերջը խօսեց նախագահող Լալնայ. նրա ճառը օգնութեան ջերմ կոչ էր դէպի թիւրքաց բռնակալութեան տակ հեծող երկու տանջվող ժողովուրդները։

—Վիէննայի «Zeit» լրագրում տպված է մակեդոնական կոմիտէի ամենաեռանդուն պարագլուխներից մէկի՝ Բորիս Սարաֆովի նամակը, որ պատասխան է այդ լրագրի նրան արած այն հարցին, թէ մակեդոնացիները արդեօք չը պէտք է հրաժարվեն իրանց յեղափոխական գործունէութիւնից այժմ, երբ նրանց դատը իր ձեռքն է առել Եւրոպան։ Սարաֆով պատասխանում է դրան. «Մենք դաւաճանների անուն կը վաստակէինք, եթէ գինաթափ լինէինք, չը տեսնելով առաջուց, թէ ինչ օգուտ կարող ենք քաղել եւրոպական միջամտութիւնից։ Մենք իրաւունք ունենք յոռետես լինելու։ Ամեն անգամ, երբ Եւրոպան սկսել է բանակցութիւնների մէջ մտնել՝ քրիստոնեաների վիճակը բարւոքելու նպատակով Թիւրքիայում, հետեւանքը լինում էին ոչ թէ ռէֆորմներ, այլ կոտորած։ Հայերի օրինակը դեռ ևս թարմ է մեր յիշողութեան մէջ։ Ինչ վերաբերում է մեզ, մենք կարող ենք որ և է յոյս տածել մեր հայրենիքի բարւոքման վրա միայն այն բոպէից, երբ կը տեսնենք նրա մէջ եւրոպական զօրքեր։ Մենք միայն պահանջում ենք Բերլինի դաշնագրով մեզ երաշխաւորած ռէֆորմները։ Բայց թիւրքիան չի տայ այդ ռէֆորմները, առանց Եւրոպայի զինուորական միջամտութեան։ Ահա թէ ինչու համար ենք պատրաստվում մեր ինքնապաշտպանութեան համար, և եթէ մենք կենդանի կը մնանք այդ անհաւասար կռիւի մէջ, մենք կը տանք մեր զէնքը միայն եւրոպական զինուորներին»։

—Գերմանիայի նշանաւոր պատգամաւոր Բէբէլ մօտ օրերումս ռէյխստագում արտասանեց մի փայլուն ճառ այն զեղծումների և ոճիրների մասին, որոնք գործվում են գերմանական զօրքի մէջ։ Շատ երկար կը լինէր թուել այն բոլոր փաստերը, որ յիշեց Բէբէլ իր ճառի մէջ։ Առաջ բերենք մի փաստ միայն, որ պայծառ կերպով բնորոշում է գերմանական զօրանոցային բարքերը։ Փաստը կատարվել է Շլեզվիգ-Հոլշտէյնում. նրա հերոսը—մի ունտէր-օֆիցէր է, Գրօսսէ ազգանունով, իսկ զոհը—նորակոչ շինուոր Ֆրէբէլ։ Միայն նորակոչ զինուորի հետ կարելի էր անել այն բանը, որ գործեց Գրօսսէ։ Քաշած-տարած գութանից կամ աշխատութեան սեղանից, գիւղացի կամ բանուոր, ընկնում է նա զօրանոցը, որտեղ հէնց առաջին բոպէից զգալ են տալիս նրան, որ նա մի փայտի կտոր է, որ նա չը պէտք է ունենայ իր «ես»-ը, որ նրա ամբողջ կեանքը ուրիշի ձեռքին է։ Նորակոչ զինուորը՝ իրան անծանօթ և օտար մարդկանց, օտար հանգամանքների, զարհուրելի կարգապահութեան, գերմանական զօրանոցային կարգապահութեան մէջ, չփոթվում, կորցնում է իրան և դառնում է մի հլու-հնազանդ, առանց սեփական կամքի, գործիք ունտէր-օֆիցէրների ձեռքին։ Զինուորական մի վարժութեան ժամանակ նորակոչ զինուոր Ֆրէբէլ իրաւունք խնդրեց Գրօսսէից դուրս գնալ զօրանոցից բնական պահանջը կատարելու համար։ Երբ ունտէր-օֆիցէրը մերժեց թոյլ տալ նրան այդ բանը՝ նա կատարեց իրան անհրաժեշտ բանը վարտիկի մէջ։ Մի ծիծաղէք, պարոններ, այդ բանը չատ ծիծաղելի կը լինէր, եթէ նրան չը հետեւէր մի ողբերգութիւն։ Վարժութիւնները վերջացնելուց յետոյ՝ ունտէր-օֆիցէրը հրամայեց զինուորներին սպառազինվել փայտերով և մի լաւ ջարդել «յանցաւոր» նորակոչին։ «Զինուորները անխօս կատարեցին հրամանը։ «Զինուորները—դուրս, խոզը—մնայ» հրամայեց ունտէր-օֆիցէրը և դահիճն ու զոհը մնացին միայնակ իրար հետ։ Դրսից, տախտակեայ պատի արանքներից տասնաւոր հետաքրքրվողների աչքեր էին նայում մերկացնելով սուրը՝ դահիճը հրամայեց. «Հանիր վարտիկդ, կեր ինչ որ արել ես»։ Նորակոչը կանգնած է՝ աչքերը սեռած իրան տանջողի վրա։ Հրամանը կատարվում է և նրան ետեւից հասցնվում է մերկացրած սրի մի հարուած։ Ֆրէբէլը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ գերմանական մի նորակոչ զինուոր։ Նրա աչքը վախեցած էր. նա վախենում էր իր կեանքի համար։ Նա տեսնում էր, որ իր ընկերները ունտէր-օֆիցէրի հրամանով հեռացան և միայնակ թողին իրան. նա անօգնական է... Եւ նա կերաւ իր աղրը... Նա խեղդվում էր, նրա սիրտը խառնում էր. նա սիրտը թափեց։ Հրէշ ունտէր-օֆիցէրը հրամայեց ուտել և այդ, որ և կատարվեց առանց հակառակութեան. բնազդը, կենդանական բնազդը յաղթեց։ Այս ամենը հաստատվեց դատաստանում։ Վերջը։ Վերջը ունտէր-օֆիցէրը զրկվեց իր աստիճանից և դատապարտվեց $1\frac{1}{2}$ տարվայ բանտարկութեան։ Գերմանական զօրանոցի հոտած մթնոլորտը այնպէս վարակված է կարգապահութեան, հակամարդկային, անգութ կարգապահութեան միջոցներով, որոնք ոչնչացնում են զգացմունքները, մտքերը, գաղափարները, որ այդպիսի փաստերը եզակի չեն և չեն կարող լինել։ Այո, ծանր է այն մթնոլորտը, որ շնչում է Գերմանիայի նեղուկը։ Թանգ գնով է գնվում խաղաղ աշխատանքը՝ զէնքի հովանու տակ։

—Ընթերցողները յիշում են երևի այն դժգոհութիւնը, որ մի քանի տարի առաջ բարձրացաւ Գերմանիայում հռչակաւոր Էէյնցէի օրէնքի դէմ, որով յետադիմական կուսակցութիւնները կամենում էին արգելքների տակ դնել գրականան և արտիստիական արտադրութիւնները։ Այժմ ևս մի համանման կռիւ է պատրաստվում։ Այս անգամ հարը թատրոնական գրուածքների ցենզուրայի մասին է։ Այս վերջին շաբաթներս, զանազան պատրուակներով, Բերլինի ցենզուրան արգելեց Օսկար Վիլդէի «Սալոմէ» դրուածը, Մաքս Դրէյէրի «Das Thal des Lebens» «կեանքի հովիտը», և Պոլ Հայզէի «Maria fon Magdala» պիէսը։ Սակայն այդ պիէսները ներկայացրվեցին հրաւիրվածների առջև, և այդ հասարակութիւնը, որ բաղկացած էր քննադատներից, դրամատուրգներից և արտիստներից, ոչինչ անարդարական և վտանգաւոր բան չը գտաւ այդ պիեսներում։ Այդ առիթով «Geothe-Bund»։ ազատամիտ ընկերութիւնը վերջին կիրակի մի մեծ միտինգ կազմեց Բերլինի Ֆիլարմոնիայի դահլիճում բողոքելու համար ցենզուրայի կամայական գործողութիւնների դէմ։ Երկու հազար անձինքներից աւելի ներկայ էին այդ միտինգին, որոնց մէջ կային հռչակաւոր դրականագէտներ և արտիստներ, օրինակ Թէոդոր Մոմզէն, Նկարիչ Ազոլֆ Ֆոն-Մենցել, պրոֆէսոր Էրերլէյն, Լինդաու, թատրոնի դիրեկտորները, Նէյման Հոֆէր և Լեօվէնֆէլդ և այլն։ Առաջին խօսողն էր Հէրման Զուդերման։ Նա մանաւանդ զայրացած խօսում էր «գերմանական ժամանակակից ամենամեծ բանաստեղծներիս մէկի»—Հայզէի գրուածքի արգելման դէմ։ Ապա Լիւդվիգ Ֆիլդա հեղնութեամբ լի մի գեղեցիկ ճառ արտասանեց, և ապա նրանից յետոյ խօսեցին մի քանի քաղաքագէտ անձինք, ի միջի այլոց Վոլֆգանգ Հայնէ, սոցիալիստական պատգամաւորը։ Վերջապէս քուէարկվեց մի բանաձև, որով ժողովը թատրոնական դրաքննութիւնը հակարում է մի անարժան հովանաւորութիւն գերմանական ժողովրդի և պահանջում է նրա ոչնչացումը։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՍ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

10 մարտի

ԿԱՐԱԿԱՍ։ Համաժողովը միաձայն վճռեց մերժել Կաստրօի հրաժարականը։

Կ. ՊՕԼԻՍ։ Տնտեսական մասնաժողովը մարտի 8-ին վերջացրեց բանակցութիւնները ուսնիֆիկացիայի մասին։ Այդ հարցի մասին զեկուցում է ներկայացրած մինիստրների խորհրդին։

ՄՕՆՏԷՎԻԴԷՕ։ Այսօր կառավարութիւնը և յեղափոխականները ստորագրեցին հաշտութեան պայմանագրութիւն։ Հաշտութիւն կայացնելը բաւականութեան ընդհանուր զգացմունք զարթեցրեց։

ԿԱՐԱԿԱՍ։ Կաստրօն համաձայնեց իր հրաժարականը յետ վերցնել. այդ մասին նա նոր յայտարարութիւն կուղարկէ համաժողովին։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Պետական դեպարտամենտի հարցապնդումին իրերի դրութեան վերաբերմամբ Չինաստանում՝ Տանդերը յայտնեց, թէ օտարերկրացիների դէմ շարունակ գոյութիւն ունեցող տրամադրութիւնը վերջին ժամանակ-

ներս լուրջ բնաւորութիւն է ստացել։ Բայց Կանտոն և Սիչուան գաւառներում շարժումը օգնութիւն չէ գտնում ազգաբնակութեան կողմից։

ԿԱՑԻՐ։ Գերմանական թագաժառանգը բոլորովին առողջացաւ։

ՍՕՖԻԱ։ Բուլգարիայի մինիստրական ճգնաժամը կարելի է անուղղելի մնայ մինչև ազգային ժողովի փակվելը, որ տեղի կունենայ մօտաւորապէս մի շաբաթից յետոյ։ Դրանից յետոյ Դանեվի դրութիւնը աւելի դժուար կը դառնայ։

ԱՄՍՏԵՐԴԱՄ։ Օրանժեան հասարակապետութեան նախկին նախագահ Շեայնի առողջութիւնը աւելի վատացաւ։

11 մարտի

ԿՈՒՆԷՕ։ Պէկմօնտում այսօր առաւօտեան երկրաշարժ զգացվեց։

ՊԱՐԻԶ։ Հարաւային Ֆրանսիայում, Տարասկոնում և Էքսլեբէնում մարտի 9-ին, ցերեկը, երեք անգամ զգացվեցին ստորերկրեայ կարճատև հարվածներ։

ԿԱԾՂԵՐՆԱՈՒՏԷՆ։ Բաւարական Պֆալցի հարաւային մասում մարտի 2-ին երեք անգամ ստորերկրեայ ուժեղ հարվածներ տեղի ունեցան։

ԱՍԽԱԲԱԴ։ «Закасп. Обозр.» Անդիժանից հեռագրում են, որ տեխնիկական մասնաժողովը մշակել է յատուկ ձևեր պետական ժամանակաւոր շինութիւնների համար Անդիժանում։ Կազմակերպած է շինարարական մասնաժողով. ծախսերի մի մասը գանձարանն է տալու, միւս մասը—քաղաքը։ Պահանջվում է մեծ քանակութեամբ բանուորներ ու վարպետներ։

ՊԱՐԻԶ։ Սենատը մարտի 10-ին հաստատեց դաւանութիւնների, ներքին գործերի և ֆինանսների մինիստրութիւնների բիւդժէտը։

ԲԵՐԼԻՆ։ «National Zeitung»-ը հաստատ աղբիւրից իմացել է, որ գերմանական թագաժառը և պրինց Էյդել Ֆրիդրիխ Կ. Պոլիսը այցելելուց յետոյ դնալու են Աթէնք։ Պաղեստին գնալու մտադրութիւնը թողնված է։ Կարելի է պրինցները գնան Հռոմ այն ժամանակ, երբ այստեղ կը գան կայսրն ու կայսրուհին։— «Köln. Zeitung»-ին հաղորդում են Կ. Պոլսից, որ Անատոլիայի երկաթուղու շարունակութեան շինութիւնը Կոնիայից դէպի Էրէգլի կը սկսվի մարտի 2-ին։ Հայդար-փաշա նաւահանգստի բացումը տեղի կունենայ ապրիլ ամսին։

ՍՕՖԻԱ։ Զինուորական մինիստր Պապրիկովի և մինիստր-նախագահի մէջ տեղի ունեցած թիւրիմացութիւնը դեռ չէ վերացել։ Ցոյս կայ, որ Պապրիկով կը մնայ. այսօր նա այցելեց զինուորական մինիստրութիւնը։ Սխալ է այն լուրը, թէ Դանեվ ժամանակաւորապէս վարում էր զինուորական մինիստրի պաշտօնը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ «Прав. Вѣст.»-ում հրատարակված է Բարձրագոյն հրաման, որ զինուորական օրէնսդրութեան 2-րդ և 4-րդ բաժինները լրացվեն նոր կանոններով պատերազմական գաղտնիքներ տալու և խաղաղ ժամանակ լրտեսութիւն անելու պատասխանատուութեան մասին։ Մարտի 8-ին, նախագահութեամբ Թագաւոր Կայսեր և մասնակցութեամբ Մեծ Իշխաններ Վլադիմիր Ալէքսանդրովիչի, Կոնստանտին Կոնստանտինովիչի և Նիկոլայ Միխայլովիչի և ներկայութեամբ անդամներ՝ կոմս Լամսդորֆի, Պոլովցովի, Մարտէնսի, Կոչէկոի և ուրիշների կայացաւ «Ռուսաց Կայսերական պատմաբանական ընկերութեան» տարեկան ընդհանուր ժողովը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲՍԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՑՈՒՀԵՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ

Բանաստեղծութիւնների,

մեծ դիրքով, մօտ 350 էջ։

Շքեղ թղթի վրա, հեղինակի պատկերով և փառակազմ 10 ռուբլի, լաւ թղթի վրա 3 ր.։ Բաժանորդագրութիւնը կը փակվի յունիսին և գրքերը կը տպվեն բաժանորդների թւով։

Թիֆլիսում դիմել—իշխ. Մարիամ Թումանեանին (Барятинская, 8) և Փ. Վարդազարեանին (Вольяминовская, 24). Բաց.—ինժէներ Մխիթար Տէր-Անդրիասեանին (Т-во Андраникъ) և Արամ Նազարէթեանին (к-ра Шагиданова)։ 8—10

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

կառապանների վերաբերեալ պարտադիր կանոնների 13-րդ յօդուածի հիման վրա, յայտարարում է Թիֆլիսի կառապաններին, որ նա նշանակել է նրանց աւագների և կանդիդատների ընտրութիւնը Քաղաքային Վարչութեան շինութեան մէջ, ուրբաթ օր, մարտի 14-ին, ցերեկվայ ժամի 3-ին և կիրակի, մարտի 16-ին, այս պատճառով էլ խնդրում է բոլոր կառապաններին չնորհ բերել Ուպրավայի բնակարանը՝ իրանց ունեցած գրքոյկներով և նշաններով՝ ընտրութիւններ կատարելու։ 1—3

50,000

ծառեր փչատերև անտառի, եղևնի և չոճի, վեց վերշոկ և աւելի, տրվում են կտրելու Իշխանուհի Մարիա Իոսիֆովնա Զավախովայի կալուածքում։ Կալուածքը գտնվում է Անդրկովկասեան երկաթուղու Գրակալի կայարանից տասն և հինգ վերստ հեռաւորութեան վրա։ Բաղի սրանից կալուածքում կան և ուրիշ տեսակի ծառեր—չինար, կաղնի, բոխի, աճառի և կեչի։ Տեղեկութիւններ ստանալու համար խնդրում են դիմել Իշխանուհի Զավախովային—Сел. Ховле, Горійскаго уѣзда, Тифлисск. губ. և Карсъ, князю Джавахову. 5—20

Միքայելեան և Կոելովի փողոցների անկիւնում, եղբ. Օգանեզովների տանը, այս մարտ ամսի 9-ից բացվում է առաջնակարգ

„ՇԱՄԻՐԱՄ“

ԱՆՈՒՆՈՎ ՃԱՇԱՐԱՆ.

Ճաշարանում պատրաստվում են եւրոպական և ասիական կերակուրներ հմուտ խոհարարի ղեկավարութեամբ։

Նախաճաշիկը սկսվում է առաւօտեան ժամի 10-ից մինչև կէսօր, ճաշը—կէս օրից մինչև երեկոյեան ժամի 5-ը, իսկ ընթրիքը—մինչև ճաշարանի փակելը։ Ընդունվում են ամսական ճաշողներ։ Գները լինելու են չափաւոր։

2—2

ԿԱՊՍԻԻԼՆԵՐ ՄԱՏԻԿՕԻ

(Cansules au Matico)

ԳՐԻՄՕ ԵՒ ԸՆԿ. ԴԵՂԱԳՈՐԾՆԵՐԻ

Թոյլ է տրված Ռուսաստանում

—

Աջողութեամբ գործ է ածվում հոնորէի բժշկութեան ժամանակ, երբէք չը յոգնեցնելով ստամոքսը, ինչպէս այդ լինում է, երբ գործ է ածվում կապայբալզամը հեղուկ ձևով։

—

Париж, 8, Rue Vivienne և գլխաւոր դեղատներում։
(12 և 28) 8—24

ՌԹԻՇԿ Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, մորթու և վեներիական ախտ ունեցող հիւանդներին։ Քիմիկո-միկրոսկոպիական կաբինէտ, որտեղ ընդունվում են կաթի, խորխի, մէզի և արեան անալիզներ։

Առաւօտեան 11—1 ժ.
Երեկոյեան 4—6 ժ.

Բերուազովսկայա փողոց № 41. տուն Արարատեանի։ Бебутовская ул. № 41. Домъ Араратова. 69—150

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

1903 թւականի մարտի 22-ին նշանակված է ընդհանուր ժողով, քուէարկելու աւագների թեկնածուներին, վերատեսուչ յանձնաժողովի թեկնածուներին և ժողովարանի անդամ առաջարկվածներին։ Նոյն ժողովում պէտք է քննվեն և մի քանի տնտեսական հարցեր։

2—3

ԱՏԱՄՆԱԲՈՑԺ

ՕՐ. Ս. ՇԵՐՄԱԶԱՆԵԱՆ

Նարսնակում է հիւանդների ընդունելութիւնը։
Առաւօտեան ժամը 9—2
Երեկոյեան ժամը 5—7
(Ա. կ.) 51—105

ԵՂԲԱՐՔ ԾՈՎԵԱՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Առևտրական տան գործերի Վարչութեան Թիֆլիսի գրասենեակը սոյն մարտի 15-ից կը տեղափոխվի Բէբուտովսկայա փողոց, № 10, գնդապետ Ստեփանեանի տունը։ Մուտքը Ուպրենսկի առաջին տուպիկից։ (12, 16 մ.) 1—2

Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութեան Վարչութիւնը

պատիւ ունի յայտնելու Ընկերութեան անդամներին, որ տարեկան ընդհանուր ժողովը նշանակված է մարտի 23-ին, երեկոյեան ժամը 8-ին, քաղաքային տան դահլիճում։

Խորհրդակցութեան նիւթերը լինելու են՝
1) Վարչութեան 1902 թ. գործունէութեան հաշուետուութիւնը։
2) Վերատեսուչ յանձնաժողովի զեկուցումը։
3) 1903 թ. նախահաշուի քննութիւնը։
4) Խուդաչեանի անունով օրիորդաց որբանոց բանալու թոյլտուութեան զեկուցումը։
5) Վարչութեան երեք անդամի, փոխ-ադամների և Վերատեսուչ Յանձնաժողովի երեք անդամների ընտրութիւնը։ (12, 16, 20, 23 մ.) 1—4

ԵՂԲ. ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆՆԵՐԻ

Հանդերձախանութում

ՍՏԱՑՎԱԾ ԵՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ

Կանանց վերնազգեստներ, այն է գէյշաներ, սակեր, կիսասակեր, ժակէտներ և պելերիններ, որոնք կարված են բերլինեան ամենավերջին տարազով և դէկորատիւական ճաշակով։ Ստացված են նոյնպէս կանանց շրջազգեստներ—մետաքսից և մուարից։

Նոյն տեղում ստացված է մեծ քանակութեամբ աղամարդկանց և երեխաների պատրաստի հագուստներ։ Ընդունում ենք նաև մեր սեփական կտորներից ամեն տեսակ պատուէրներ, որոնք ստացված են արտասահմանի և Ռուսաստանի ամենայայտնի գործարաններին։ Գների կողմից չունի ոչ ոք մրցող։

Գոլովինսկի պրոսպ. I-ին գիմնազիայի հանդէպ։ 3—10

„ԱՐՕՐ“ ՏՊԱՐԱՆԸ

կարճատև դադարումից յետոյ դարձել է մեր սեփականութիւն և վերսկսել է տպարանական բազմատեսակ պատուէրներ ընդունել։

Պատուէրները կատարվում են մաքուր, ժամանակին և բարեխիղճ գներով։

Տպարանին կից կայ կազմարան, գծարան և թղթավաճառանոց։

Սրբագրական բոլոր աշխատանքը ուրախութեամբ և առանց վարձատրութեան կատարում ենք։

Հայ թարգմանիչներին և գլխաւորապէս գրողներին տրվում է որոշ զիջում։

6—6 ՏՊԱՐԱՆԱՏԷՐ ԺԱՄՀԱՐԵԱՆ

Բերված են Լագոդեխից Թիֆլիս և ծախվում են «ԱՇԽԱՏԱՆՔ» ընկերութեան տնկարանից

ՊՏՂԱՏՈՒ ԾԱՌԵՐ

1—3 տարեկան, արտասահմանի և տեղական տեսակներից։ դիմել Աֆրիկեանին Пушкинская ул. магазинъ Меликъ-Бахтамянца. 7—10

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„ԴԱԳԷՔԹԳԱ“

ծովային, գետային եւ ցամաքային ապահովագրութեան, ապրանքների տեղափոխութեան եւ գոյքերը կրակից ապահովագրելու համար։

ՀԻՄՆՎԱԾ Է 1847 ԹՒԻՆ

Հիմնական գրամագլուխը	1,650,000	ռուբլի
Պահեստի դրամագլուխը	2,664,808	»

Ի. ԱԳՐԱՆՔՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ.

Աւելի քան 300 գործակալութիւններ եւրոպական Ռուսաստանի, Կովկասի, Միջին Ասիայի, Սիբիրի եւ հեռաւոր Արեւելքի բոլոր նշանաւոր տեղերում, նոյնպէս եւ ներկայացուցիչներ արտասահմանի գլխաւոր քաղաքներում։

Տեղափոխութիւն ամեն տեսակ բեռների եւ իրերի, որոնց ընդունելութիւնը եւ յանձնումը կատարվում է թէ տեղը եւ թէ պահեստներում ու խանութներում։

Յանձնումն բեռների ուղարկվողների կողմից առաջարկված պայմաններով (վերադիր գներ ի հաշիւ ուղարկողների, դրամի փոխադրութիւն (переводъ) բեռները յանձնելու տեղը հասցնելու համար եւ այլն)։

Պահպանութիւն բեռների արտաքին պայմաններով ստացման տեղերում՝ ապահովագրելով նրանց պահեստներում, որի համար չտա կէտերում կան ընդարձակ պահեստներ, յատկապէս բեռներ պահելու համար։

II. ՆԱԻԱԳՆԱՑ ԻԹԻՒՆ

Սեփական մարդատար, ապրանքատար եւ ձգող շոգենաւեր, ծովային եւ գետային նաւեր (70 նաւ)։

Բեռնակիր եւ մարդատար նաւերի պարբերական հաղորդակցութիւն Վոլգա գետի բոլոր նաւահանգիստների մէջ, Ռիբինսկից մինչեւ Աստրախան, եւ Կասպից ծովի բոլոր նաւահանգիստների մէջ, Աստրախանից մինչեւ Պարսկաստանի ափերը։

Ամենաընդարձակ պահեստներ Նիժնիում (սիբիրական նաւամատոյցի վրա), Աստրախանում, Բաքւում եւ Կրասնովոդսկում։

Բեռները անընդհատաբար ուղարկելու համար ընկերութեան շոգենաւագնացութիւնը համահնչութիւն է կապել երկաթուղիների հետ։ Այն ապրանքների տեղափոխութեան համար, որոնք ուղարկվում են Ռուսաստանից Պարսկաստան եւ Պարսկաստանից Ռուսաստան, գոյութիւն ունի առանձին, բացառիկ առաջնութիւններով, համաձայնութիւն Պարսկական ապահովագրական եւ տեղափոխութեան ընկերութեան հետ։

Ա. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ.

ա) Ապահովագրութիւն բեռների, որոնք տեղափոխվում են թէ ցամաքային և թէ ջրային ճանապարհներով (ծովերով և գետերով)։

բ) Ապահովագրութիւն կրակից ամեն տեսակ գոյքերի։

գ) Ապահովագրութիւն ամեն տեսակ դժբաղդ դէպքերից ճանապարհին ամեն տեսակ նաւերի, շոգենաւերի, առագաստանաւերի, վագոնների և վագոն-ցիստերնների։

դ) Ապահովագրութիւն թանգագին իրերի և արժէքաւոր թղթերի, որոնք ուղարկվում են պօստով, ցամաքային և ծովային ճանապարհներով, համաշխարհային պօստային դաշնակցութեան բոլոր կէտերի մէջ։

Ապահովագրութիւններ ընդունվում են ինչպէս վարչութեան, այնպէս էլ ամեն տեղ ընկերութեան բոլոր գործակալութիւնների մէջ։

Բացի տեղափոխութեամբ զբաղվող գործակալութիւններից, կրակից ապահովագրելու գործերով մասնաւորապէս զբաղվում են էլի ուրիշ 350 գործակալութիւններ։

Ս. Պետերբուրգի «Նադեժդա» ընկերութեան վարչութիւնը գտնվում է Ս. Պետերբուրգում, Նէվսկի պրոսպէկտի վրա, № 10-բորդ տունը։

Լիազօրներ—ծովային շոգենաւագնացութեան համար՝ Բաքւում, գետային շոգենաւագնացութեան համար՝ Նիժնի-Նովգորոդում։

Թիֆլիսի գործակալութիւնը—Դվօրցովայա փողոցի վրա, վրաց ազնվականների տունը։ Տելեֆոն № 108
(Ա. ա. կ.) 46—120

Дозволено Цензурою. Тифлисъ, 11 Марта 1903 г.

Электропечатная Груз. Изд. Т—ва, Б.-Ванкская 93